

**ԱՆՃԵԱՒ ԲՅՈՒՎՈՂՅԱԼՆ
ԼՍԼԻԹ ՏԵՐ-
ԳՐԻԳՈՐՅԱԼՆ**

**ԳԱՎԻԹ
ԳՅՈՒՎՁԻՆՅԱԼՆ
ՆԱՐԻՆԵ ՀԵՔԵՔՅԱԼՆ**

ՄԱՅՐԵՆԻ 2 - 4

Ուսուցչի ձեռնարկ

Երևան 2007

Պետական կրթական շափորոշիչները սահմանում են, քն ի՞նչ պետք է գիտենա և կարողանա տարրական դպրոցն ավարտողը:

Տարրական դպրոցն ավարտող պետք է կարողանա՝

- սահուն և գրագետ կարդալ՝ հասկանալով կարդացածի իմաստը և պահպանելով հայերեն խոսքի ճիշտ արտասանությունը.
- քանավոր և գրավոր ճիշտ արտահայտվել (համապատասխանաբար պահպանելով ուղղախոսական, ուղղագրական և քերականական տարրական կանոնները).
- հասկանալ կարդացած տեքստերում հանդիպած քառերի իմաստ(ներ)ը.
- լսել խոսակցին, նրա առածը հասկանալ ու ճիշտ վերարտադրել, հիմնավորված պատասխան տալ.
- տարբերել արձակ և չավանճ առեղծագործությունները.
- կարդալ գեղարվեստական և գիտահանրամատչելի ոչ քարոչ տեքստեր և քանավոր ու գրավոր վերարտադրել դրանց քովանդակությունը.
- առաջադրված բեմային համապատասխան հարցեր կազմել և գրավոր շարադրել պատասխանները.
- օգտվել դպրոցական քառարաններից և մանկական հանրագիտարաններից.
- իրավիճակին համապատասխան խոսք կառուցել, իր մտքերը, կարծիքը հստակ և ճիշտ հայերենով ձևակերպել և հաղորդել ուրիշին.
- քանավոր և գրավոր ներկայացնել իր զգացմունքները, երևակայությանը պատկերացրածը.
- իր խնայածը ճիշտ և հասկանալի հաղորդել ուրիշին.

2-րդ դասարան

Ծրագրային պահանջներ

Երկրորդ դասարանի՝ ծրագրով նախատեսված նյութը ստացին դասարանում մատուցված նյութի օրգանական և տրամաբանական շարունակությունն է՝ նրա կրկնողությամբ, ծավալումով ու խորացմամբ և, անշուշտ, նոր գիտելիքների մատուցմամբ, ուստի հետևողականորեն պետք է շարունակվի այն կարողությունների զարգացումը, որոնք ձևավորվել են 1-ին դասարանում, պետք է ամրակայվեն ու խորացվեն այն գիտելիքները, որոնք ձևաչափով 1-ին դասարանում:

Հայտնի լեզվի և գրականության նոր ծրագրով 2-րդ դասարանում սովորողից պահանջվում է՝

- խոսքի բնական տեմային համապատասխան՝ ճիշտ, սահուն, հասկանալով և արտահայտիչ կարդալ.
- համընթաց տեքստի բովանդակությունը և ճիշտ ըմբռնել ղեկավարի հաջողականության կապը .
- ազատորեն վերարտադրել և ստեղծագործաբար վերափոխել տեքստի բովանդակությունը.
- նկարագրել առարկաներն ու նր նույրները.
- մտքերը տրամաբանորեն շարադրել և ազատ արտահայտվել կարդացածի, տեսածի, լսածի վերաբերյալ.
- գրավոր ամփոփ շարադրել մտքերը.
- տարբերել տեքստի տեսակները (պատմողական, նկարագրական).
- հարցին ճիշտ ու բովանդակալից պատասխանել, այլ և ինքնուրույն հարցեր ձևակերպել.
- համընթաց գրական ստեղծագործության գաղափարական բովանդակությունը, գտնել տեքստի գեղարվեստական պատկերավորման միջոցները.

- գիտակցել բառի, բառակազմակերպման և նախադասության տարբերությունները.
- ճանաչել բառի բաղադրիչները, ըստ այդմ՝ ընկալել և հասկանալ բառի իմաստը և այլն:

Գրասացրքի կառուցվածքը

Որքան էլ յուրաքանչյուր դասագիրք պարունակում ու թելադրում է նա և ուսուցանելու մեթոդիկան, այնուամենայնիվ, միշտ չէ, որ ուսուցիչը կարող է քաջահայտել դասագրքի ներքաջուն հնարավորություններն ու առանձնահատկությունները:

Այդ խիստ կարևոր դերը վերագրահված է տվյալ դասագրքի ուղեցույցին կամ ուսուցչի ձեռնարկին, որը դասագրքից առավել մատակարարում է արդյունավետ օգտվելու եղանակների ու հնարների մեթոդական համակարգն է: Այն հասկանալի կարևորվում է կրտսեր դպրոցում, քանզի թե՛ մեթոդական և թե՛ մանկավարժական խնդիրներով պայմանավորված՝ այդ դասարանների դասագրքերը բազմաթիվ և բազմակողմանի աշխատանք են պահանջում:

Կրտսեր դպրոցի մայրենի լեզվի դասագրքերը մատուցում են լուծելու կրթադաստիարակչական ամենատարբեր խնդիրներ, որոնց անբողջության մեջ իրագործումն ուսուցչից կախանջի քաղմակողմանի գիտելիքներ, մասնագիտական մեծ վարպետություն ու պատրաստվածություն և, իհարկե, շատ մեծ նվիրում:

Մայրենի լեզվի դասընթացն իրականացվում է երկու ուղղություններով՝ ընթերցանություն և լեզվական տարրական գիտելիքների ուսուցում, որոնք շուրջ ցամառ տարի է, ինչ դասագրքերում մատուցվում են զուգահեռ՝ ընթերցանության և լեզվական նյութերի համակցմամբ:

Մայրենի լեզվի II դասարանի դասագիրքը ևս, ինչպես ցամառացած դասագիրք, ունի կառուցվածքային և մեթոդական իր առանձնահատկությունները, որոնց իմացությունն անհրաժեշտ է թե՛ կրթական և

գի դրանք ծառայեցնի լեզվական նյութի ամրակայմանն ու խոսքի զարգացման նպատակներին:

Յուրացանյուր դասանյութի հետ տրվում են նաև ուղղագրական արժեք ունեցող քառեր, որոնք անհրաժեշտ է արտագրել «*Իմ օգնականը*» գիրք-տետրի ուղղագրական քառարանի բաժնում:

Ինչպես 1-ին, այնպես էլ 2-րդ դասարանի ընթերցարանին կից նախատեսված է ունենալ լրացուցիչ ուսումնասիրական ձեռնարկ՝ «*Իմ օգնականը 2*» գիրք-տետրը, որը նախատվ ունի ոչ միայն որոշ չափով լուծելու արտադասարանական ընթերցանության մի շարք խնդիրներ, այլև առաջարկելու դասարանական ու տնային բազմաբնույթ աշխատանքների համալիր՝ երգեր, նկար-սյուսանություններ, ներկելու և նկարագրողելու նյութեր, լեզվական գիտելիքներն ամրակայելու իրադրային խաղեր և այլն:

Հատուկ էջեր տրամադրված կլինեն ուղղագրական, քաղատրական քառարանների, այլև սրատկերավոր արտահայտությունները դասանյութերից դուրս գրելու համար:

Աշխատանքների այս ամբողջ համալիրն ուղղված է համակողմանիորեն զարգացած և ներդաշնակ անհատներ ձևավորելու ծրագրային պահանջները լավագույնս իրականացնելուն:

Երկրորդ դասարանցիներին տրամադրվելու է նաև արտադասարանական ընթերցանության համար նախատեսված պատճառներով, հեքիաթների, առակների ժողովածու:

Լեզվական տարրական գիտելիքների ուսուցում

Երկրորդ դասարանում նախատեսված է տարրական գիտելիքներ հատորդել հնչյունաբանությունից, ուղղագրությունից, քառականգնությունից, նախադասությունից, այլ և կրկնել առաջին դասարանում մատուցված լեզվական նախագիտելիքները: Որպես կրկնողություն տրվող նյութերը մատուցվում են «*Հիշո՛ւմ եմ, որ...*» խորագրով, իսկ նոր մատուցվող նյութերը՝ «*Գիտե՛ս, որ...*» խորագրով: Որպես կանոն՝ նախ տրվում է կրկնողության նյութը, ապա այն խորացվում է նոր մա-